ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Լ. Ս. ՉԱՔԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքով լուրջ քայլ արվեց տնտեսական բարեփոխումների ուղղությամբ։ Սակայն հասկանալի է, որ օրենքի ընդունումը միայն գործի սկիզբն է։ Հողի սեփականաշնորհումը՝ գյուղում նոր տնտեսական հարաբերությունների հաստատումը, այսօր հուզում է բոլորին, քանի որ նաև դրանից է կախված մեր հանրապետության ապագան և, հետևապես, մեր ազգային նպատակների իրագործումը։ Օրենքի կիրարկումը ցույց տվեց, որ ամենուրեք չէ, որ գյուղացին հաճույքով է վերցնում հողը։ Դա ունի իր տնտեսական, քաղաքական և հոգեբանական պատճառները։

Այսօր գյուղացու առջև տնտեսական շատ բարդ խնդիրներ են դրված, որոնք դժվարացնում են ընտրության հնարավորությունը։ Դա և՛ ջրի (այսօր դեռևս չկա այդ դժվարին պրոբլեմը լուծելու միջոց), և՛ տեխնիկայի (մեր արդյունաբերությունը բազմաթիվ պատճառներով անկում է ապրում և դժվար է ասել, թե մոտ ապագայում հնարավորություն կունենա օգնել գյուղին), և՛ հողաբաժինների չափի ու որակի, և՛ սերմացուի, և՛ անասնակերի հարցն է։ Այս խնդիրների մի մասը կարելի է լուծել արդեն այսօր՝ կոոպերացիայի օգնությամբ։

Հայտնի է, որ ԽՍՀՄ-ում կոոպերացիայի ձևերը երկուսն էին՝ արտադրական կոոպերացիան (կոլտնտեսությունները) և սպառողական կոոպերացիան։ Պետք է նշել, որ կոոպերացիայի դասական սկզբունքներից ոչ մեկը հատուկ չէ խորհրդային կոոպերացիային և այն կոոպերացիա կարելի է անվանել սոսկ պայմանականորեն։ Համեմատելու նպատակով կանգ առնենք այլ երկրներում մեծ տարածում գտած դասական կոոպերացիայի վրա, համառոտակի ներկայացնելով նաև նրա հիմքը կազմող ֆերմերային տնտեսությունը։

Զարգացած կապիտալիստական երկրներում գյուղատնտեսական արտադրանքի հիմնական մասը այսօր արտադրվում է ֆերմաներում, որոնք ըստ արտադրության կազմակերպման ձևի լինում են.

1. ընտանեկան ֆերմաներ։

2. Համատեղ ֆերմաներ, երբ երկու կամ ավելի ֆերմաներ միավորում են իրենց սեփականությունը՝ համատեղ տնտեսություն վարելու նպատակով։

3. Գյուղատնտեսական կորպորացիաներ։ Դրանք բաժնետիրական ընկերություններ են, որոնք ստեղծվում են գյուղատնտեսական արտադրանք արտադրելու կամ վերամշակելու նպատակով։

Այս ձևերից ամենատարածվածը ընտանեկան ֆերման է (ԱՄՆ-ում 1982 թ. դրանք կազմում էին բոլոր ֆերմաների 87 %-ը)[1]։

Ֆերմերային տնտեսությունները գործում են մրցակցության պայմաններում։ Տարբերում են երկու տիպի մրցակցություն՝ կատարյալ (ոչ մոնոպոլիստական) և ոչ կատարյալ (մոնոպոլիստական)։ Խորհրդային գրականության մեջ անտեսվում էին ազատ (ոչ մոնոպոլիստական) մրցակցության դրական կողմերը՝ արտադրության խթանումը, հասարակական արտադրության համամասնության ապահովումը, արտադրանքի որակի անընդհատ բարձրացումը։ Ազատ մրցակցության ուղղակի հակադրությունն է մոնոպոլիստականը, որը մեծ չարիք է մանր և միջին արտադրողների հա-

[1] А. А. Конышин, Фермерское хозяйство США, М., 1989, с. 64.

մար։ Մոնոպոլիաների ֆերմաների մեծությունը, տեխնիկական հագեցվածության բարձր մակարդակը, դրամական ազատ միջոցների կուտակումը ուղղակի անհնար են դարձնում մրցակցությունը։ Ազատ մրցակցությունը նախատեսում է հավասար պայմաններ և հնարավորություններ մրցակիցների համար։ Մոնոպոլիստական մրցակցությունը վերացնում է այդ հավասարությունը։ Մոնոպոլիաները ավելի մեծ հնարավորություններ ունեն. դրանք կարող են հակառակորդին զրկել և՛ հումքից, և՛ շուկայից, կարող են իրենց օգտին փոփոխել նաև գների մեխանիզմը։ Այս ամենի հետևանքով ֆերմերներին խորհուրդ էր տրվում խուսափել մոնոպոլիստական իրավիճակի ստեղծումից, հատկապես կերարտադրության, պաքարտանյութերի, գյուղատնտեսական տեխնիկայի միջոցների արտադրության ոլորտներում[2]։

Մրցակցությանը դիմանալու միջոցներից է կոոպերացիան, որը բավական լայն տարածում է գտել կապիտալիստական երկրներում։ Գյուղատնտեսական կոոպերատիվները առաջացել են անցյալ դարի կեսին և այսօր որոշ երկրներում գերիշխող դիրք են գրավում։ Կոոպերատիվները ֆերմերների կամավոր կազմակերպություններ են, որոնց անդամները ընդհանուր սեփականության հիման վրա իրենց ապահովում են անհրաժեշտ ծառայություններով։ Կոոպերացիայի դասական սկզբունքները փոփոխություն չեն կրել ստեղծման ժամանակից։ Դրանք են՝

1. կամավորության կամ բաց անդամության,

2. բաժնետիրական (բաժնեվճարը, շահույթն ու հնարավոր կորուստները բաշխվում են կոոպերատիվի անդամների միջև ստացվող ծառայությունների ծավալին համապատասխան),

3. դեմոկրատական կառավարման (յուրաքանչյուր անդամ, անկախ բաժնեվճարի չափից, ունի մեկ ձայնի իրավունք. դրանով կոոպերացիան տարբերվում է բաժնետիրական ընկերություններից)։

Կոոպերատիվներն ունեն իրավաբանական անձի կարգավիճակ։ Դրանք ֆերմերներին մի շարք առավելություններ են ընձեռում.

1. հեշտացնում են վարկ ստանալը, պայմաններն ավելի ձեռնտու են դառնում,

2. կոոպերատիվի անդամները հարկային արտոնություններ են ստանում,

3. ռիսկի գործոնը փոքրանում է,

4. մոնոպոլիաների հետ մրցակցության հնարավորություններ չեն ստեղծվում և այլն։

Կոոպերացիայի սկզբունքներից է նաև կոոպերատիվների ձևերի բազմազանությունը և կառուցվածքի ընտրության ազատությունը։

Կոոպերատիվները լինում են՝

1. Արտադրական կոոպերատիվներ, որոնք միմյանցից տարբերվում են հանրայնացման աստիճանով։ Դրանցում կարող են հանրայնացված լինել միայն հողը կամ աշխատանքի միջոցները, գյուղատնտեսական կենդանիները կամ միայն արտադրանքը։

2. Մարքետինգային կոոպերատիվները զբաղվում են արտադրանքի տեսակավորմամբ, վերամշակմամբ, փաթեթավորմամբ, տեղափոխությամբ, գովազդով և իրացումով։ Այս կոոպերատիվները լայնորեն տարածված են, որովհետև գյուղատնտեսական արտադրանքի շատ փոքր տոկոսն է չմշակված հանվում շուկա (ԱՄՆ-ում՝ 10 %[3], ԳՖՀ-ում՝ ընդամենը 4 %[4])։

---

[2] М. Бакетт. Фермерское производство: организация, управление, анализ, М., 1989, с. 265.

[3] А. А. Коныгин, նշվ. աշխ., էջ 59։

[4] С. Б. Андреев, Аграрно-промышленный комплекс ФРГ: особенности и проблемы формирования, М., 1987, с. 38.

3. Մատակարարող կոոպերատիվները արտադրության միջոցներ են մատակարարում իրենց անդամներին։ Դրանց թվին են պատկանում եվրոպական երկրներում տարածում գտած «մեքենաների կոոպերատիվները», որոնք, սակայն, ընդհանուր սեփականություն չունեն։ Յուրաքանչյուր ֆերմեր կոոպերատիվի մյուս անդամներին տրամադրում է իր սեփական տեխնիկան և ինքը կարող է օգտվել դրանց սեփականությունից։ Այս կոոպերատիվի նպատակն է կրճատել գյուղատնտեսական մեքենաների համար կատարվող ծախսերը։

4. Սպասարկող կոոպերատիվները բազմաթիվ գյուղատնտեսական ծառայություններ են մատուցում ֆերմերներին (օրինակ, մեքենորատիվ աշխատանքներ են կատարում, անասնակեր են պատրաստում և այլն)։ Դրանց թվին են պատկանում նաև տեղեկատվական և համակարգիչ կոոպերատիվները։

Ճապոնիայում կոմպյուտերային տեխնիկայով այսօր հագեցած են միայն խոշոր տնտեսությունները։ Մանր տնտեսությունները զրկված են այդպիսի հնարավորությունից, սակայն կարող են օգտվել կոոպերատիվների ծառայություններից։

Սպասարկող կոոպերատիվների թվին են պատկանում ընտրասերման կոոպերատիվները։ ԳՖՀ-ում այդպիսի կոոպերատիվները պետական կազմակերպությունների մասնակցությամբ ընտրում և ատեստավորում են ցուլերին։ Չատեստավորված անասունների օգտագործումը ընտրասերման համար պատժվում է մինչև մեկ տարի ազատազրկմամբ կամ տուգանքով։ Այդ պատճառով ֆերմերների մոտավորապես 90 %-ը օգտվում է ընտրասերման կոոպերատիվների ծառայություններից[5]։

ԱՄՆ-ի գյուղատնտեսության նախարարությանը կից գործում է ներդրման կոոպերատիվ ծառայությունը, որը ֆերմերներին տեղեկացնում է ագրոարդյունաբերական համալիրում տեղի ունեցող բոլոր տեխնոլոգիական, տնտեսական, առևտրական փոփոխություններին, ծանոթացնում է այն բոլոր տեխնոլոգիաներին, որոնք արդեն փորձարկվել են գյուղատնտեսական կայանների փորձարարական ֆերմաներում։

Անհրաժեշտ է նշել, որ կոոպերացիան յուրաքանչյուր երկրում ունի իր առանձնահատկությունները։ Դա կախված էր տվյալ երկրի բնակլիմայական պայմաններից, արտադրաբեղանակի զարգացման մակարդակից, պատմական և ազգային առանձնահատկություններից։ Օրինակ, Ճապոնիայում հողակտորների միջին չափը չի անցնում 1,2 հեկտարից, հողակտորների մեծ մասը գտնվում է թեքությունների վրա։ Սեփական տեխնիկա ունենալը, հատկապես գյուղատնտեսական թանկարժեք մեքենաներ, տնտեսապես շահավետ չէ, այդ պատճառով Ճապոնիայում լայնորեն տարածված են «մեքենաների կոոպերատիվները», որոնք կարող են իրենց անդամներին տրամադրել ցանկացած գյուղատնտեսական մեքենա։

ԱՄՆ-ում, համեմատած եվրոպական երկրների հետ, կոոպերացման մակարդակը ավելի ցածր է։ Դա բացատրվում է գյուղատնտեսության մեջ մոնոպոլիաների ներթափանցմամբ և գերիշխանությամբ։ Դրա հետևանքով մրցակցությունը այստեղ կատարյալ չէ, և ամերիկյան ֆերմերները, համեմատած արևմտաեվրոպական ֆերմերների հետ, իրենց տնտեսությունը վարելիս ավելի մեծ դժվարությունների են հանդիպում։ Այդ պատճառով, չնայած ԱՄՆ-ի բնակլիմայական նպաստավոր պայմաններին, փոքր ֆերմաները (տարեկան 20 հազ. դոլարից պակաս արտադրանք իրացնողները), որոնք կազմում են բոլոր ֆերմաների 72 %-ը, հողային տիրույթների 29 %-ը, աշխատուժի 44 %-ը, 11 %-ից պակաս արտադրանք են տալիս[6]։

---

5 Նույն տեղում, էջ 18։

6 А. А. Конышин, նշվ. աշխ., էջ 68:

Սակայն ինչպիսին էլ լինեն տարբերությունները՝ կոոպերացիայի սկզբունքները, նրա տեսակների բազմազանությունը պահպանվում է բոլոր երկրներում։ Կապիտալիստական առաջավոր երկրներում որպես սկզբնական տնտեսական միավոր պահպանվում են ընտանեկան ֆերմաները։ Կոոպերացիայի հաջողությունները պայմանավորված են նաև նրանով, որ այն ոչ թե վերացնում է իր անդամների սեփականությունը, այլ՝ ամրապնդում։ Կոոպերացիան թույլ է տալիս տնտեսել և կապիտալը, և աշխատանքը, և արտադրամիջոցները։ Միևնույն ֆերմերը սովորաբար մի քանի կոոպերատիվների անդամ է լինում։

Կոոպերացիայի կշիռը որոշ երկրներում պարզելու համար բերենք մի քանի տվյալներ։ ԱՄՆ-ում կոոպերատիվների ձեռքում է գյուղատնտեսական արտադրանքի վերահսկման և իրացման 30, ֆերմաների նյութատեխնիկական մատակարարման 27 %-ը[7]։ Ճապոնիայում գյուղատնտեսական արտադրանքի 55 %-ը պատկանում է կոոպերատիվներին, այդ թվում բրնձի արտադրության՝ 64, բանջարեղենի՝ 45, մրգերի՝ 90 %-ը[8]։ Ֆրանսիայում կոոպերատիվները վերամշակում են ցորենի՝ 70, կաթնամթերքի՝ 47 %, նրանց ձեռքում է խաղողագործության՝ 50, կերարտադրության՝ 35, բանջարեղենային պահածոների՝ 30 %-ը[9]։ Իտալիայում արտադրամիջոցների մատակարարման 40 %-ը իրականացնում են կոոպերատիվները, նրանք են վերամշակում գյուղատնտեսական արտադրանքի 25 %-ը, իրացնում են 17 %-ը[10]։ Հոլանդիայում կոոպերատիվները արտադրում են կաթի՝ 87, պանրի՝ 92, կենդանական յուղերի՝ 94, կաթի փոշու՝ 81, խտացրած կաթի՝ 77 %-ը։ Շաքարի ճակնդեղի վերամշակման 2/3-ը վերահսկվում է կոոպերատիվների կողմից[11]։ Ֆինլանդիայում անասնամորթի՝ 86, կաթի արտադրության՝ 90 %-ը իրականացնում են կոոպերատիվները[12]։

Այսպիսով, ինչպես տեսանք, կոոպերացիան բավականին մեծ տեղ է գրավում կապիտալիստական երկրների գյուղատնտեսության մեջ։ Կոոպերացիայի կշիռը աստիճանաբար աճում է նաև այն երկրներում, ուր այն համեմատաբար թույլ է զարգացած, օրինակ, ԱՄՆ-ում։ Դա բնականոն պրոցես է, որը հատուկ է բոլոր երկրներին։ Եվ քանի որ այս հարցում ևս ԽՍՀՄ-ը բացառություն է կազմում, կարծում ենք, հետաքրքիր կլինի անդրադառնալ մեր երկրում կոոպերացիայի պատմությանը։

Նախահեղափոխական Ռուսաստանում կոոպերացիան խոր արմատներ չուներ։ Ռուսաստանը թույլ զարգացած կապիտալիստական երկիր էր։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացման մակարդակը շատ ցածր էր հատկապես գյուղում։ Ճորտատիրությունը Ռուսաստանում թողել էր սոցիալ-տնտեսական, հոգեբանական և մշակութային խոր հետևանքներ։ Գյուղացիությունը դեռևս սոցիալապես ճնշված դասակարգ էր, գյուղացիները չէին կարող ազատորեն տնօրինել իրենց հողակտորը, գյուղում զգացվում էր դրամական միջոցների պակաս։ Իսկ կոոպերացիայի զարգացման համար անհրաժեշտ պայման է շուկայական ազատ հարաբերությունների առկայությունը։ Կոոպերացիան պահանջում է նաև որոշակի կուլտուրական մակարդակ, որը ևս շատ ցածր էր։ Դրա հետևանքով կոոպերացիան կազմակերպվեց վերևից՝ լիբերալ կալվածատերերի կողմից, Գերմանիայի օրինակով։

Ռուսաստանում կոոպերացիան հենց սկզբից չկազմակերպվեց բաժնետիրական սկզբունքով։ Կոոպերատիվների միջոցները գոյանում էին պետական բանկի, զեմստվոների, մասնավոր անձանց և կազմակերպությունների

---

7 Նույն տեղում, էջ 59։

8 АПК, экономика, управление, М., 1988, № 7, с. 112.

9 Նույն տեղում։

10 Նույն տեղում։

11 АПК, экономика, управление, М., 1989, № 9, с. 120.

12 Նույն տեղում, 1988, № 7, էջ 112։

վարկերից։ Մինչև 1917 թ. կոոպերացիայի ամենատարածված ձևերն էին սպառողականը (11,5 մլն անդամ) և վարկայինը (10,3 մլն)[13]։

Կոոպերատիվների կառավարումը իրականացվում էր կոոպերատիվների խորհուրդների կողմից, որոնք ընտրովի մարմիններ էին։ Սակայն կոոպերացիայի զարգացման համար Ռուսաստանում կային լուրջ խոչընդոտներ, որոնց թվին էր պատկանում ռուսական գյուղացիական համայնքը։ Համայնքի քայքայման առաջին լուրջ փորձը կատարեց Ս. Վիտտեն, որը գտնում էր, որ կոոպերացիայի զարգացումը հնարավոր է միայն անձնական սեփականատիրության և զարգացած քաղաքացիության դեպքում[14]։ Առաջին փորձն անհաջող էր։ Երկրորդը ձեռնարկեց Ստոլիպինը։ Կառավարության գլուխ անցնելով, նա սկսեց իր բարեփոխումների ծրագրի իրագործումը։ 1906 թ. գյուղացիներին վաճառվեց պետական հողերի մի մասը, վերացվեց խմբական երաշխավորությունը, գյուղացիներին ազատ տեղաշարժի իրավունք տրվեց[15]։ 1917 թ. գյուղացիական հողի 62,5 %-ն արդեն մասնավոր սեփականատիրություն էր[16]։ Սակայն բարեփոխումները անավարտ մնացին։

Նախապատերազմյան շրջանում կառավարման խորհրդի անդամների 80 %-ը կազմում էր գյուղացիությունը[17]։ Դա վկայում էր ռուսական կոոպերացիայի աստիճանական դեմոկրատացման մասին։

Փետրվարյան հեղափոխությունից հետո, չնայած պատերազմական գործողություններին, կոոպերացիան վերելք ապրեց։ Սակայն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կոոպերացիայի վերընթաց զարգացումը կանգ առավ։

Քանի որ կոոպերացիայի ճակատագիրը կապված էր լենինյան գաղափարների էվոլյուցիայի հետ, ուստի անդրադառնանք Վ. Ի. Լենինի մոտեցմանը այս հարցին։ «Կապիտալիստական» կոոպերացիան ապահովում էր սոնտեսական առաջադիմությունը, հետևապես այն ամրապնդում էր կապիտալիզմի դիրքերը, և այդ պատճառով հարմար չէր սոցիալիստական հասարակարգ կառուցող երկրին։ Սակայն Լենինը բարձր էր գնահատում կոոպերացիայի դերը ժողովրդական զանգվածների ինքնագործունեության զարգացման գործում։ Բացի դրանից, կոոպերացիան վերափոխելուց հետո, այն կարելի էր օգտագործել ամբողջ հասարակության վերահսկողության համար։ Պետք է նշել, որ այդ տեսությունը վերջնականորեն մշակված չէր։ Բավական է ասել, որ Լենինը ոչ մի առանձին աշխատություն այս հարցին չի նվիրել։ Սակայն ընդունվեցին առաջին դեկրետները՝ «Սպառողական կոմունաների մասին» (20. III. 1919) և «Բոլոր տեսակի կոոպերատիվ կազմակերպությունների միավորման մասին» (27. I. 1920)։ Այս դեկրետներով փաստորեն վերջ դրվեց գյուղատնտեսական կոոպերացիային։

Այն, որ «սոցիալիստական» կոոպերացիայի նպատակը հսկողության սահմանումն էր, հաստատում է հետևյալը.

1. վերջ դրվեց կամավորության սկզբունքին։ Լենինը դրա փոխարեն նախատեսում էր «ամբողջ բնակչության ստիպողական միավորում արտադրասպառողական կոմունաների մեջ»[18], դրանով հնարավորություն էր ստեղծվում հսկել աշխատանքն ու բաշխումը։

2. Վերացվեց բաժնետիրության սկզբունքը։ Ըստ բաժնեվճարի, բաշխման փոխարեն նախատեսվում էր անցնել «պրոլետարա-կոմունիստական

---

13 Л. Е. Файн, История разработки В. И. Лениным кооперативного плана. М., 1970, с. 58.

14 Вопросы истории, 1990, № 8, с. 44.

15 Նույն տեղում, № 6, էջ 63։

16 Новый мир, 1988, № 5, с. 185.

17 История СССР, 1989, № 4, с. 65.

18 Վ. Ի. Լենին, Նկտ, հ. 36, էջ 92։

սկզբունքին»[19], որը առավելություն էր տալիս չքավոր և մասամբ միջակ գյուղացիներին։

3. Վերջ դրվեց կոոպերացիայի տեսակների բազմազանությանը՝ բոլոր սպառողական ընկերությունները միավորվեցին մեկ կոմունայի մեջ, որը միակն էր տվյալ տարածքում։

4. Վերացվեց կառավարման դեմոկրատական սկզբունքը, քանի որ կառավարման տեղական մարմիններն իրենց ներկայացուցիչներին էին մտցնում կոոպերացիայի խորհրդի մեջ, և դրանց իրավունք էր վերապահվում ցանկացած ժամանակ կասեցնել խորհրդի որոշումը։

1918 թ. դեկտեմբերի 2-ի դեկրետով արդեն ազգայնացվել էին կոոպերատիվ բանկերը։ Այդ դեկրետով պետությունը նաև հսկողություն հաստատեց վարկային կոոպերացիայի նկատմամբ։

Դեկրետները պետք է նախապատրաստեին անցումը «միասնական համաժողովրդական կոոպերատիվին»։

Ինչ վերաբերում է գյուղատնտեսական կոոպերացիային, այն միանշանակ անկում էր ապրում։ Դրա պատճառներն էին.

1. երկրի տնտեսական քայքայվածությունը,

2. կոոպերատիվ կենտրոնների և միությունների փոխարինումը դեռ լրիվ չկազմավորված նոր մարմիններով,

3. հին ապարատի մասնագետների կորուստը,

4. նյութական բազայի մասնակի քայքայումը,

5. խախտվել էին հին տնտեսական կապերը, իսկ նորերը չէին կազմավորվել,

6. «ռազմական կոմունիզմի» պայմաններում կոոպերատիվների տնտեսական գործունեության շատ բնագավառներ ավելորդ էին դարձել։

Շուտով պարզվեց, որ տեսությունը սնանկ է, որ հետամնաց Ռուսաստանը չի կարող «միասնական համաժողովրդական կոոպերատիվ» դառնալ, և երբ «ռազմական կոմունիզմից» անցում կատարվեց ՆԷՊ-ին, ապրարային ոլորտում բազմակացութաձևության հաստատման հետ փոփոխվեց նաև մոտեցումը կոոպերացիային։ 1921 թ. նոր դեկրետներ են ընդունվում՝ «Սպառողական կոոպերացիայի մասին» (7. IV.), «Արհեստագործական կոոպերացիայի մասին» (26. VII.), «Գյուղատնտեսական կոոպերացիայի մասին» (16. VIII.), «Վարկային կոոպերացիայի մասին» (24. I. 1922)։

20-ական թվականներին կոոպերացիայի մեջ ընդգրկված էր գյուղացիական տնտեսությունների ավելի քան 35 %-ը։ Կոոպերատիվների բազմաթիվ տեսակներ են առաջանում (կաթի, կարագի, պանրի և այլն)։ Սպառկոոպերացիայի միջոցով իրացվում էր մսի 20 %, ցորենի՝ 40, բամբակի՝ 80, ճակնդեղի և վուշի՝ 90 %-ը[20]։ ՆԷՊ-ի շրջանում սպառկոոպերացիայի գլխավոր խնդիրն էր արդյունաբերական արտադրանքը գյուղատնտեսական մթերքների հետ փոխանակելու պետության առաջադրանքի կատարումը։

Սպառողական առաջին ընկերությունը Հայաստանում հիմնվել էր 1898 թ. Երևանի թեմական դպրոցի մի խումբ ուսուցիչների, արհեստավորների, առևտրական տների գործակատարների, մանր վաճառականների ջանքերով։ 1917 թ. վերջերին Արևելյան Հայաստանում գործում էր 270 սպառողական կոոպերատիվ։ 1919 թ. ստեղծվում է Երևանի նահանգի սպառողական ընկերությունների միությունը, որը 1919 թ. հունիսի 28-ին վերանվանվեց Հայկոոպ[21]։ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո սպառկոոպերացիան սկսում է իրականացնել նաև վարկային և արտադրագյուղատնտեսական կոոպերատիվների ֆունկցիաներ։ Թեպետ գյուղա-

---

19 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 37, էջ 584։

20 Как решить продовольственную проблему, М., 1989, с. 7.

21 Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, Երևան, 1980, էջ 195։

տնտեսական կոոպերացիան Հայաստանում առաջացել էր մինչև հեղափոխությունը, սակայն գործունեության համար բնականոն պայմաններ չունենալու պատճառով թույլ էր զարգացած։ 1924 թ. գյուղատնտեսական կոոպերատիվների առաջին համագումարում ձևավորվեց Հայգյուղկոոպը, ստեղծվեցին վարկային, այնուհետև մատակարարման և առևտրական կոոպերատիվները։ 1924 թ. Հայաստանում գործում էր 5 գյուղվարկային ընկերություն, 6 կաթնարտել և 2 հողօգտագործման ընկերություն, որոնցում ընդգրկված էր 1384 մարդ[22]։

Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերացիան շատ դանդաղ էր զարգանում։ Դրա պատճառը հայ գյուղացու ձգտումն էր դեպի մասնավոր սեփականությունը, իսկ խորհրդային կոոպերացիան ուղղված էր հենց այդ սեփականության դեմ։ Աշխատող գյուղացին տեղ չուներ այդպիսի կոոպերացիայում։ Խորհրդային կոոպերացիան ուներ դասակարգային բնույթ, և, ինչպես նշվում էր 1924 թ. սեպտեմբերի 20-ին Երևանում բացված գյուղկոոպի I համագումարի որոշման մեջ, «Գյուղի բարձր խավերը և վերջին տարիներին ուռճացած էլեմենտները տեղ չունեն կոոպերացիայում»[23]։

Կոոպերացիայի այն ձևերը, որ չէին սպառնում հայ գյուղացու սեփականատիրական ձգտումներին, համեմատաբար ավելի արագ էին զարգանում։ 1928 թ. հանրապետությունում արդեն գործում էին 95 կաթնարտել, 41-ը՝ գյուղվարկային, 25-ը՝ այգեգործական, 17-ը՝ մեքենաօգտագործման, 32-ը՝ հողօգտագործման և այլ ընկերություններ[24]։ Կոոպերացիայի «պարզ» ձևերը գերիշխում էին լեռնային գյուղերում։

Կոոպերացիայի զարգացմանը խոչընդոտում էր նաև հայկական գյուղի սոցիալ-տնտեսական ծայրահեղ հետամնացությունը։ ՆԷՊ-ը զարգացման համար ստեղծեց որոշ հնարավորություններ։

«Կոոպերացիայի մասին» Լենինի հոդվածը, ընդամենը նոր փոփոխված պատկերացումների շարադրանքը լինելով, ընդունվեց որպես ծրագիր և ստացավ «Լենինյան կոոպերացման պլան» անվանումը։ Հոդվածում նշվում է, որ հասարակության զարգացման հետ կոոպերացիայի պարզագույն ձևերից պետք է անցում կատարվի դեպի ամենաբարդ՝ արտադրական կոոպերացիան։ Այսօր զարգացած կապիտալիստական երկրներում այդ ձևերը գործում են կողք-կողքի միմյանց չխանգարելով, և գերադասությունը տրվում է այն ձևին, որը այս կամ այն պայմաններում ամենահարմարն է։ Հոդվածում նշված՝ անցման կամավորությունը փաստորեն պարտադիր բնույթ ուներ։ Լենինի մահից հետո աստիճանաբար ՆԷՊ-ից անցում է կատարվում ստալինյան տնտեսական քաղաքականությանը։ Սկսվում է «Լենինյան կոոպերացման ծրագրի» համատարած կոլեկտիվացման իրագործումը։ Նշենք դրա հետևանքները կոոպերացիայի համար.

1. Կոլտնտեսությունների բռնի հաստատմամբ մոռացվեց ՆԷՊ-ի շրջանում վերականգնված կամավորության սկզբունքը (բռնություն էր կատարվում ոչ միայն մարդկանց կամքի և գույքի, այլև կյանքի նկատմամբ)։ Գյուղացուց խլեցին և՛ հողը, և՛ անասունները, և՛ աշխատանքի առարկաները։

2. Կոլտնտեսությունների արտադրանքը դիտվում էր ոչ թե որպես այդ կոլեկտիվի սեփականություն, այլ պետության սեփականություն։ Պետությունը վերցնում էր կոլտնտեսություններից այն ամենը, ինչ իրեն անհրաժեշտ էր։ Արտադրողների գինը ցածր էր ինքնարժեքից։ Պատահական չէ, որ այս շրջանում ԽՍՀՄ-ի հացաշատ վայրերում սարսափելի սով բռնկվեց։ Անմիջական արտադրողից արտադրության արդյունքը օտարելով, վերջ դրվեց

---

22 Գ. Մ. Գևորգյան. Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում ՆԷՊ-ի տարիներին (1921—1930), Երևան, 1978, էջ 101։

23 Նույն տեղում, էջ 102։

24 Նույն տեղում, էջ 103։

կոոպերացիայի կարևորագույն սկզբունքներից մեկին՝ նյութական և բարոյական շահագրգռվածությանը։

3. Քանի որ կոլտնտեսությունները բացի արտադրական ֆունկցիայից պետք է իրականացնեին և այլ ֆունկցիաներ, կոոպերացիայի պարզագույն ձևերը համարվեցին ավելորդ և վերացվեցին։ Սակայն կոլտնտեսությունները չէին կարող արտադրել և վերամշակել այն ամենը, ինչ մինչ այդ արտադրում էին գյուղատնտեսական կոոպերատիվները։ Այդ տեսակետից կոլտնտեսությունների ստեղծումը հարվածեց նաև սպառողի շահերին։ Մինչև այժմ չի լուծված գյուղատնտեսական մթերքների պահեստավորման և անկորուստ իրացման հիմնահարցը, որին հաջողությամբ կարող էր հասնել կոոպերացիան։

4. Կոլտնտեսությունը չէր կարող ինքնուրույն ձևավորել իր արտադրական կառուցվածքը, որոշել տնտեսության վարման պայմանները, արտադրության բաշխումը, եկամտի բաշխման կարգը։ Կոլտնտեսությունները ամեն ինչով միանման էին երկրի տարբեր շրջաններում, որոնք ունեին տնտեսական, սոցիալական, ազգային էական տարբերություններ։ Դրա հետևանքով, որոշ շրջաններում կոլտնտեսությունները, էլ չենք ասում խորհտնտեսությունների մասին, ուղղակի քայքայում էին գյուղատնտեսությունը։ Գյուղեր կային, որոնցում բնակչությունը դարեր շարունակ զբաղվել է նաև արհեստներով։ Սակայն արգելվեց անհատական աշխատանքային գործունեությունը, վերացվեցին արհեստագործական կոոպերատիվները, և այդ գյուղերը դատապարտվեցին քայքայման և հետագայում ամբողջովին լքվեցին։

5. Կոլտնտեսությունների ստեղծման մեթոդներն իրենց հետքը թողեցին ողջ կոլտնտեսային կարգի վրա։ Կոլտնտեսություններն ընկան երկակի ենթակայության տակ՝ գերատեսչական և վարչատարածքային։

6. Կոլտնտեսությունները հենց սկզբից դիտվում էին որպես անլիարժեք, անցողիկ ձև։ Ապագան պետք է պատկաներ խորհտնտեսություններին (սովորության ուժը այնքան ուժեղ է, որ այդ դրույթը արտացոլվել է նաև 1988 թ. մայիսի 26-ի «Կոոպերացիայի մասին» օրենքում, ուր առաջատար դերը հատկացվում է պետական (համաժողովրդական) սեփականությանը)։

1950—60-ական թվականներին սկսվում է կոլտնտեսությունների խոշորացման պրոցեսը, որի արդյունքը հայտնի է՝ քայքայված գյուղեր ու տընտեսություններ։ ՄՏԿ-ները, որոնք նախկին «մեքենաների կոոպերատիվների» պետականացված ձևն էին ներկայացնում և կոլտնտեսություններին ուղղակի կեղեքող մարմիններ, լուծարվեցին, դրանց արտադրամիջոցները վաճառվեցին կոլտնտեսություններին։ Դրանով ընդլայնվեց վերջիններիս սեփականության օբյեկտը, սակայն տնտեսական էական բարելավում տեղի չունեցավ, որովհետև այդ տնտեսական մեխանիզմը արդեն չէր գործում։ Աճեց անշահութաբեր կոլտնտեսությունների թիվը։ Կոլտնտեսությունները արդեն կատարել էին իրենց առաքելությունը, որը փոփոխված մեթոդներով միջնադարյան ճորտատիրական շահագործման վերականգնումն էր։ Կոլտնտեսային համակարգի նպատակն էր.

1. Գյուղացու ամրացումը հողին (մինչև 60-ական թվականները գյուղացին չուներ անձնագիր և առանց գյուղխորհրդի հատուկ թույլտվության այլ վայր տեղափոխվելու իրավունքից զրկված էր)։

2. Պետական հսկողության սահմանում մանրապրանքային տնտեսության, նրանում ստեղծված հավելյալ, երբեմն նաև անհրաժեշտ արդյունքի նկատմամբ։ Դրա հետևանքն էր գյուղացու օտարումը հողից և հակասության ստեղծումը կոլտնտեսային համակարգի ներսում, հակասություն, որը հասցրեց ոչ թե զարգացման, այլ կոլտնտեսային համակարգի քայքայման։

Տնտեսությունն ունի զարգացման իր օրինաչափությունները, և այն, ինչ խոչընդոտում է դրան, ուշ թե շուտ պետք է վերացվի։ Սակայն արմատական փոփոխությունները տնտեսության մեջ անհնար էին առանց քաղաքական

խոր փոփոխությունների և, բացի այդ, լենինյան կոոպերատիվ պլանի համաձայն, սեփականության երկու ձևերը պետք է միաձուլվեին։

Կոլտնտեսությունների որոշ ֆունկցիաներ տրվեցին պետական ծառայություններին («Գյուղտեխնիկան», «Գյուղտնտքիմիան», շինարարությունը, տրանսպորտը և այլն)։ Որոշ կոլտնտեսություններ վերածվում էին խորհտնտեսությունների, որից հետո դադարում էին շահութաբեր լինելուց. բոլոր ծախսերը արդեն հոգում էր միայն պետությունը։

1960—1983 թթ. Հայաստանում կոլտնտեսությունների թիվը 760-ից իջավ 218-ի, իսկ խորհտնտեսությունների թիվը 83-ից՝ 491-ի[25]։ 1960 թ. կոլտնտեսությունները օգտագործում էին ԽՍՀՄ-ի հողային տարածքի 3/4-ը, 1980 թ.՝ 1/4-ը[26]։ Այդ քաղաքականությունը արտադրության աճ չտվեց, քանի որ սովխոզը տնտեսապես ավելի արդյունավետ ձև չէր, բայց մեծացան պետության ծախսերը։ Կոլեկտիվ և պետական սեփականության փորձ էր նաև Ագրոարդի ստեղծումը, որը շուտով վերաճեց վարչական մի մեծ ապարատի։ Դա ևս մեծ հարված էր կոլտնտեսային համակարգին, քանի որ՝

1. Տնտեսապես թույլ կոլտնտեսությունները ագրոարդյունաբերական միավորման (ՇԱԱՄ-ի) միջոցով ամրացվեցին ավելի ուժեղներին։ Դրանով շահութաբեր տնտեսությունները անշահութաբերների հետ դրվեցին հավասար պայմանների մեջ և բավականաչափ տուժեցին դրանից։

2. Կոլտնտեսությունները խորհտնտեսությունների հետ սկսեցին օժանդակ տնտեսությունների դեր կատարել ՇԱԱՄ-ում։ Պետական միջոցների ներդրումը, կոլտնտեսությունների պարտքերի մարումը և այլն ոչ մի բարելավում չէին կարող կատարել։ Չնայած այս ամենին, պետք է նշել, որ կոլտնտեսությունները համեմատած խորհտնտեսությունների հետ, տնտեսապես ավելի կայուն էին և շահութաբեր։ 1987 թ. շահութաբերության մակարդակը կոլտնտեսություններում կազմում էր 24 %, խորհտնտեսություններում՝ 17 %[27] (Հայաստանում համապատասխանաբար՝ 8,3 և 26 %)[28]։ Արտադրանքի ինքնարժեքը կոլտնտեսություններում ավելի ցածր է, աշխատանքի արտադրողականությունը՝ բարձր։

Ինչ վերաբերում է սպառկոոպերացիային, վերը նշված թերությունները այնպիսի վերափոխության ենթարկեցին այն, որ այժմ այն վերածվել է մի մոնոպոլիայի, որը կարող է իր պայմանները թելադրել արտադրողին։ Պատահական չէ, որ գյուղացին այսօր գերադասում է իրացնել իր տնտեսության արտադրանքը շուկայում կամ օգտվել միջնորդ առևտրականի ծառայություններից։

Այսպիսով, կոլտնտեսային համակարգն ու կոոպերացիան սկզբունքորեն տարբեր կազմակերպություններ են։ Կոլտնտեսային սեփականության ձևը մեր հանրապետությունում իր դերն ապրել է։ Գյուղում արդեն սկսվել է սեփականաշնորհման գործընթացը։ Կոոպերացիայի զարգացման համար բարենպաստ պայմաններ են ստեղծվել, որ այսօր կարող է մեծ օգնություն ցույց տալ գյուղացուն։ Միայն նրա միջոցով է կարելի պահպանել նյութական այն բազան, որ այսօր կա գյուղում։ Պատահական չէ, որ տարբերյանորեն գյուղատնտեսական կոոպերատիվներ արդեն ստեղծվում են, և տարիներ են պետք դրանց գնահատականը տալու համար։ Սակայն մի բան այսօր արդեն պարզ է՝ այլուհետև մեր հողը անտեր չի մնա, անկախ այն բանից, թե ինչպիսի տնտեսավարման ձև կընտրի գյուղացին։

---

25 Проблемы социально-экономического развития горных районов, Ереван, 1985, с. 30.

26 Как решить продовольственную проблему, с. 7.

27 Նույն տեղում, էջ 11։

28 С. Е. Оганян, Агро промышленный комплекс Арм. ССР (экономико-географическое исследование эффективности и организации, Ереван, 1989, с. 12.

К ВОПРОСУ О КООПЕРАЦИИ И КОЛХОЗНОЙ СОБСТВЕННОСТИ

Л. С. ЗАКАРЯН

Резюме

Сейчас в нашей республике происходят глубокие экономические изменения, одним из которых является приватизация земли. Перед крестьянами стоит ряд нерешенных проблем, что затрудняет исполнение принятого Верховным Советом Республики Армения «Закона о крестьянских коллективных хозяйствах», который оставляет выбор форм собственности и ведения хозяйства за крестьянами.

Наиболее распространенной в развитых капиталистических странах формой ведения хозяйства является кооперация, в основе которой лежат фермерские хозяйства.

В СССР развитие кооперации имеет свои исторические особенности. Классическая кооперация переросла в советскую колхозную систему, в ходе чего были утеряны наиболее ценные черты кооперации. Колхозная система экономически не оправдала себя, и наряду с гос. собственностью явилась причиной упадка деревни.